

տակ կամ բուսած ծներեկի պէս եղէգի ձեւով (առղ՝ 162—164)։

Հ. Ստ. Ագոնց, որ 120 տարի յետոյ գիրի առած է իր Աթխարհագրութիւնը, ինքն ալ նոյն խաբկանքը ունեցած է, երբ կը խօսի կէօնաէրէն երկու օրուան ճամբայ հեռու գտնուող ոսկիի լեւան մը մասին, որմէ չէին օգտուեր Հապէշները, վասնզի անոր շահագործումը վտանգաւոր կը համարէին, խորհելով թէ մօտակայ մահմետականներ պիտի տիրէին իրենց երկիրին՝ այդ հարստութեան տիրանալու համար (էջ 523)։ Բայց Ագոնց աւելի տրամաբանական կը համարէ այս հանքին չօգտագործուիլը վերագրել Հապէշներու անփութութեան և տգիտութեան և փայտի կամ ածուխի նուազութեան, վասնզի ոսկի զտելու համար պէտք կ'ար կրակի։ Ասոր համար կ'ըսէ, թէ անոնք կը գոհանան տեղ տեղ աւազուտներու մէջ կամ վերոյիշեալ լեւան վրայ գտնուող ոսկիի փոշին հաւաքել, երբ անձրեւային եղանակին հեղեղները այդ լեռնէն աւազին հետ ոսկիի փոշին կ'իջեցնեն դաշտերը, որոնք սեփականութիւնն են թագաւորին։ Թագաւորը ամառը մարդիկ կը զրկէր հաւաքելու այդ ոսկիի փոշին։ Ագոնց կը յարէ, թէ այդ մարդիկը «բազում անգամ զսանին եւ ձոյլս ոսկւոյ ի չափ սխաւան»։

Այս բոլորը կը հաւաքէին և կը տանէին արքունի գանձը, ուր կը դրոշմուէր դրամ՝ վաքիէ կոչւած բնիկներէն (Ափրիկէ, էջ 523)։

Յովհաննէս Թիւթիւնճի, ինչպէս տեսնուեցաւ, քանի մը պզտիկ չափազանցութիւններէ զատ, որոնք յաճախ դիւրահաւանութեան արդիւնք են, իր տեղեկութիւններուն մէջ չունի արտառուցութիւններ և ասով մեծ նպաստ մը կը բերէ պատմութեան, վասնզի